ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում է.

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության տասնմեկերորդ գումարման Գերագույն խորհրդի արտահերթ՝ տասներորդ նստաշրջանը գումարել 1989 թվականի սեպտեմբերի 16-ին, Երևան քաղաքում:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝ Հ. ՈՍԿԱՆՅԱՆ

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ

11 սեպտեմբերի 1989 թվականի, քաղ. Երևան

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ՝ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում է.

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թվականի օգոստոսի 1-ի «Ժողովրդական դեպուտատների խորհուրդների արտահերթ նստաշրջաններ անցկացնելու մասին» որոշմանը համապատասխան Հայկական ԽՍՀ տասնմեկերորդ գումարման Գերագույն խորհրդի արտահերթ՝ տասներորդ նստաշրջանի քննարկմանը մտցնել հետևյալ հարցերը.

1. Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի հաշվետվությունը հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման և իրադրության կայունացման խնդիրների մասին:

2. Ռեգիոնում իրադրության սրման և ԼՂԻՄ-ի պրոբլեմի լուծման ուղղությամբ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ ներկայացվող առաջարկությունների մասին:

3. Փախստականների տեղավորման հարցի վերաբերյալ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի ընդունած որոշումների կատարման և այդ աշխատանքի ուժեղացման լրացուցիչ միջոցառումների մասին:

4. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դիմումը ԽՍՀՄ Գերագույն խորհրդին և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ հայ ազգաբնակչության անվտանգությունն ապահովելու մասին:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝ Հ. ՈՍԿԱՆՅԱՆ

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ

11 սեպտեմբերի 1989 թվականի, քաղ. Երևան